# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 247 (24528), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۵۲۸) ۲۴۷ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ՀԻՆԳՇԱԲԹԻ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

پنجشنبه – ۹ آذر ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی




Իսլ. յեղափոխութեան առաջնորդ.

## ««ՆՈՐ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔ» ՍՏԵՂԾԵԼՈՒ ԱՄՆ-Ի ԾՐԱԳՐԵՐԸ ՁԱԽՈՂՒԵԼ ԵՆ»

«ԱԼԻՔ» - ԱՄՆ-ը չկարողացաւ կեանքի կոչել «Նոր Մերձաւոր Արեւելք» ստեղծելու եւ տարածաշրջանում իր քաղաքական նպատակներին հասնելու ծրագրերը: Այս մասին երէկ՝ նոյեմբերի 29-ին «Բասիջ»-ի աշխարհազօրայինների հետ հանդիպման ժամանակ յայտարարել է Իսլ. յեղափոխութեան առաջնորդ այաթ. Սէյեդ Ալի Խամենէին:

Իր ելոյթում անդրադառնալով Մերձաւոր Արեւելքի հետ կապւած ԱՄՆ-ի ծրագրերին եւ հեռահար նպատակներին, այաթ. Խամենէին ասել է. «Նոր Մերձաւոր Արեւելք» ձեւաւորելու ԱՄՆ-ի ծրագրերը ձախողւեցին: Նրանք ծրագրում էին ոչնչացնել «Հեզբոլլահ»-ին, բայց հիմա այն 10 անգամ աւելի ուժեղ է: Նրանց չյաջողւեց կլանել Իրաքն ու Սիրիան, եւ նրանք չկարողացան լուծել պաղեստինեան հակամարտութիւնը սիոնիստական ռեժիմի շահերին համապատասխան՝ օգտագործելով երկերեսանի՝ «երկու պետութիւնների» սկզբունքի վրայ հիմնւած նենգ լուծումը»:

Իսլ. յեղափոխութեան առաջնորդը պաղեստինեան դիմադրութեան «Ալ Աքսայի փոթորիկ» գործողութիւնը «պատմական իրադարձութիւն» է անւանել, որին յաջողւել է տարածաշրջանն «ապաամերիկանացնել»: ««Ալ Աքսայի փոթորիկ» պատմական իրադարձութիւնը սիոնիստական ռեժիմի դէմ է, բայց այն ապաամերիկանացրել է տարածաշրջանը:

Պատմութիւն կերտող այս իրադարձութիւնը կարողացաւ բառիս բուն իմաստով խանգարել ամերիկեան քաղաքականութեան սխեման այս տարածաշրջանում, եւ տայ Աստւած, որ այս փոթորիկը շարունակւի եւ իսպառ ոչնչացնի այդ սխեման»,- յայտնել է այաթ. Խամենէին:

Խօսելով պաղեստինեան հակամարտութեան կարգաւորման իրանական տարբերակի մասին, Իսլ. յեղափոխութեան առաջնորդը յստակեցրել է. «Իրանի Իսլամական Հանրապետութիւնը հաւատում է Պաղեստինում հանրաքւէին եւ ժողովրդի կարծիքին: Իսլամական Հանրապետութեան տեսակէտը սիոնիստներին եւ հրեաներին ծովը լցնելը չէ»:

## Թուրքիա-Ադրբեջան պաշտօնական տեսակէտները ՀՀ-ում հնչեցնում են նրանց ոչ պաշտօնական ներկայացուցիչները



Թուրքիայի եւ Ադրբեջանի պաշտօնական տեսակէտները Հայաստանում հնչեցնում են նրանց ոչ պաշտօնական ներկայացուցիչները: Այս մասին գրում է ՀՅԴ ԳՄ անդամ, ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթէլեանը:

«Ցեղասպանութեան յանցակից եռեակը (Նիկոլ Փաշինեան, Վահագն Խաչատուրեան, Ալէն Սիմոնեան) Ալիեւի հետ համատեղ ջանքերով արցախահայերին ցեղասպանելուց, Արցախը հայաթափելուց յետոյ լծւել են Արցախի էջը փակելու գործին:

Ըստ դաւաճան եռեակի՝ Արցախի էջը փակ է, Արցախի պետական ինստիտուտների պահպանումը սպառնալիք ՀՀ անվտանգութեան համար: Սա, իհարկէ, Թուրքիայի եւ Ադրբեջանի պաշտօնական տեսակէտն է, որ Հայաստանում հնչեցնում են նրանց ոչ պաշտօնական ներկայացուցիչները:

Յանցագործ եռեակն ուղիղ ասում է՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի գործոնն այլեւս չպէտք է դիտարկել իբրեւ սպառնալիք ՀՀ անվտանգութեանը, պէտք է գտնել խաղաղ համակեցութեան բանաձեւ:

(Շար. 8-րդ էջում)

Լիլիթ Գալստեան.

## «Հայաստանում դաւաճան-ուրացող լինելը դարձել է թրենդային»



«Սրանք ո՛չ մեղքի, ո՛չ բարոյականութեան, ո՛չ խղճի, ո՛չ Հայրենիքի, ո՛չ պետականութեան, ո՛չ սեփական պատմութեան, ո՛չ ազգային իղձերի, ո՛չ անցեալի ժառանգութեան, ո՛չ ինքնութեան, ո՛չ սրբազան նախատակների, ո՛չ մեր հաւաքական ապագայի հետ կապ ունեն»,- գրում է ՀՅԴ Գերագոյն մարմնի անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանը:

«Հայաստանում ԴԱՒԱՃԱՆ-ՈՒՐԱՑՈՂ լինելը դարձել է բացիլօրէն թրենդային, երեւում արծաթը՝ համատարած:

Սրանք ո՛չ մեղքի, ո՛չ բարոյականութեան, ո՛չ խղճի, ո՛չ Հայրենիքի, ո՛չ պետականութեան, ո՛չ սեփական պատմութեան, ո՛չ ազգային իղձերի, ո՛չ անցեալի ժառանգութեան, ո՛չ ինքնութեան, ո՛չ սրբազան նախատակների, ո՛չ մեր հաւաքական ապագայի հետ կապ ունեն:

Բա սրանք ի՞նչ կապ ունեն մեր հետ, ո՞վ են, որտեղից եկան...

Չունեն, չունեն կարմիր գծեր...

Բայց սրանք նաեւ չգիտեն, որ կայ հատուցման ՏԻԵԶԵՐԱԿԱՆ օրէնքը. անխուսափելիօրէն՝ ԿԱՅ»:

Yerkir.am

## Իրանը հերքել է Հայաստանի ատոմակայանի կեղտաջրերի միջոցով Արաքս գետի աղտոտումը

«ԱԼԻՔ» - Արդաբիլ նահանգի տարածաշրջանային ջրամատակարարման ընկերութեան գործադիր տնօրէն Ալի Հէյդարի Անարին հաւաստել է. «Հայաստանում Մեծամօրի ատոմակայանի կեղտաջրերի միջոցով Արաքս գետի աղտոտումը չի համապատասխանում իրականութեանը, եւ այս գետում ռադիոակտիւ նիւթերի առկայութեան մասին յայտարարութիւնները չեն հաստատւել:

(Շար. 8-րդ էջում)




Մոհամմադ Ասադի Մովահեդ.

## «Հայաստանը երբեք Իրանի հետ մշակութային կապերի զարգացման խոչընդոտներ չի ստեղծել»

Յանկանում եմ շնորհակալութիւն յայտնել հայ ժողովրդին եւ Հայաստանի պետութեանն այն բանի համար, որ երբեք Իրանի հետ մշակութային կապերի զարգացման խոչընդոտներ չեն ստեղծել: Այս մասին նոյեմբերի 28-ին լրագրողների հետ զրոյցում ասել է Հայաստանում Իրանի դեսպանութեան Մշակութային կենտրոնի խորհրդական Մոհամմադ Ասադի Մովահեդը:

«Մենք պէտք է շատ աշխատենք մշակութային կապերի մերձեցման ուղղութեամբ: Չնայած Հայաստանի եւ Իրանի միջեւ յարաբերութիւնները երկար պատմութիւն ունեն, այնուամենայնիւ, փոխադարձ տեղեկացւածութեան մակարդակը երկու կողմում ցածր մակարդակի վրայ է: Մտաւորականութեան եւ մշակոյթի գործիչների ներկայացուցիչների ակտիւ այցելութիւնները Հայաստանից կօգնեն

(Շար. 8-րդ էջում)





«Կորուստներից ամենազարհուրելին հայը տեսաւ, բայց հայն էր, որ չխրատւեց, յոյսը միշտ օտարի վրայ էր: Թուրքի մօտ էր սպասեց ռուսին, ռուսը եկաւ, աչքը եւրոպացին էր, եւրոպացին գալիս է՝ դարձեալ ռուսին է սպասում, ռուսը գալիս է չի ընդունում: Դու չես կարող հասկանալ, ուզո՞ւմ է պետութիւն ստեղծել, թէ՞ չի ուզում: Մի ձեռքով ճանկռելով հիմնում է այդ պետութիւնը, միւս ձեռքով հիմքից քանդում:

Ինչո՞ւ է այդպէս, ինչի՞ց է դժգոհ, ի՞նչ է կամենում, ինչո՞ւ է մեկուսանում, առանձնանում, որպէսզի նիւթի՞, դաւի՞, փասի՞... ո՛չ, հազար անգամ ո՛չ»

Դերենիկ Դեմիրճեան (1877-1956), հայ մեծանուն գրող, հրապարակախօս


ARAM® coffee

ԱՐԱՄ

قهوه آرام սուրճ

فروشگاه مرکزی:

قائم مقام فراهانی–شماره ۶۴

88303478 եւ 88308730

www.aramcoffee.com

instagram:aram__coffee




# «Խաղաղութեան խաչմերուկ»-ի իդէաֆիքսը

*Դեռեւս 2021 թւականի յունւարի 11-ին Նիկոլ Փաշինեանի, Վլադիմիր Պուտինի եւ Իլհամ Ալիեւի՝ Մոսկւայում կայացած եռակողմ հանդիպման արդիւնքներով ընդունւեց համատեղ յայտարարութիւն, որտեղ նշւում էր Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետների գլխաւորութեամբ եռակողմ աշխատանքային խմբի ստեղծման մասին, որը զբաղւելու էր Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ճանապարհների տարածաշրջանային ապաշրջափակման հարցերով: Եւ պարբերաբար փոխվարչապետների մասնակցութեամբ հանդիպումներ էին տեղի ունենում, սակայն ճանապարհների ապաշրջափակման մտադրութիւնն այդպէս էլ մնում էր քննարկումների մակարդակում: Իսկ այդ ընթացքում Փաշինեանն ու իր թիմը փորձեցին հանրութեանը ներկայացնել, որ ճանապարհների ապաշրջափակումը Հայաստանին աhռելի օգուտներ է բերելու:*

*Նոյնիսկ խօսւում էր այն մասին, որ ճանապարհների ապաշրջափակման արդիւնքում Հայաստանի ՀՆԱ-ն կարճ ժամանակամիջոցում 30%-ի աճ կարձանագրի: Ու ճանապարհների բացման ծրագրին ինստիտուցիոնալ տեսք հաղորդելու համար Փաշինեանը ներկայացրեց նոր նախագծի իրականացման գաղափարը, որը միախառնւեց «Հիւսիս-հարաւ» նախագծին եւ ստացաւ «Հիւսիս-հարաւ/Արեւելք-արեւմուտք», կամ՝ «Հայկական խաչմերուկ» անւանումը: Փաշինեանն իր ելոյթներում ներկայացնում էր, որ «Հայկական խաչմերուկ»-ը նոր հորիզոններ է բացում ոչ միայն Թուրքիայի ու Ադրբեջանի հետ հաղորդակցութիւն հաստատելու, այլեւ Ռուսաստանի ու Իրանի հետ երկաթուղային հաղորդակցութեան վերականգնման համար: Բայց պէտք է նկատի ունենալ, որ խաչմերուկի նախագիծը նշանակում է խաչւող ճանապարհներ, իսկ դրանում Վրաստանի ու Իրանի հետ մեր ուղիղ հաղորդակցութեան բարելաւման մասին խօսք չկայ, այնինչ Հայաստանը սահման ունի այդ երկրների հետ:*

*«Հիւսիս-հարաւ» մայրուղին էլ, որ պէտք է բարելաւի Հայաստանի հաղորդակցութիւնն Իրանի ու Վրաստանի հետ, տարիներով կառուցւում են, բայց չեն վերջացնում: Իսկ ինչ վերաբերում է Թուրքիայի ու Ադրբեջանի միջոցով Իրանի, Վրաստանի ու Ռուսաստանի հետ նոր հաղորդակցութեան ուղիների ստեղծմանը, ապա այս պլանն անիրատեսական է թւում: Դրա համար Թուրքիան ու Ադրբեջանը նախ պէտք է թողնեն, որ իրենց տարածքով ՀՀ քաղաքացիները, հայկական բեռներն ու ապրանքներն անխոչընդոտ անցնեն: Բայց ժամանակն անցնում է, իսկ Փաշինեանի խոստացած «Հայկական խաչմերուկ»-ի նախագիծը շատ հեռու է իրականութիւն դառնալուց: Թերեւս պատճառը պարզ է՝ Թուրքիան ու Ադրբեջանը չեն ցանկանում Հայաստանի հետ իրենց սահմանները բացել, որպէսզի հաղորդակցութեան ուղիները գործեն: Այլ կերպ ասած՝ եթէ Թուրքիան ու Ադրբեջանը շահագրգռւած լինէին ճանապարհների ապաշրջափակմամբ, ապա արդէն այդ քայլին գնացած կը լինէին:*

*Թուրքական եւ ադրբեջանական իշխանութիւններին պէտք է, որ Հայաստանը շրջափակման մէջ մնայ, նրանց ձեռնտու չէ, որ սահմանները բացւեն, ու Հայաստանը տնտեսական զարգացման հնարաւորութիւններ ստանայ: Պատահական չէ, որ Բաքւից ու Անկարայից անընդհատ յայտարարութիւններ են հնչում, այսպէս կոչւած, «Զանգեզուրի միջանցք»-ի մասին: Ըստ էութեան, Թուրքիան ու Ադրբեջանը ցանկանում են իրենց վերահսկողութեան տակ գտնւող միջանցք ստանալ Հայաստանից, իսկ այդ դէպքում Հայաստանի հետ սահմանները բացելու կարիք էլ չկայ: Այնպէս որ, Փաշինեանը կարող է ճանապարհների ապաշրջափակումն անւանել «Հայկական խաչմերուկ», «Խաղաղութեան խաչմերուկ», այդ նախագծի մասին բրիւշուրներ կամ նոյնիսկ գրքեր տպել, ներկայացնել մեր միջազգային գործընկերներին, դրանից ոչ մի բան չի փոխւի:*

*Միեւնոյնն է, ո՛չ միջազգային հանրութիւնը, ո՛չ էլ մեր գործընկեր պետութիւնները հետամուտ չեն լինելու այս նախագծի իրականացմանը այն ձեւաչափով, ինչպէս Հայաստանն է պատկերացնում: Իսկ աւելի կոնկրետ՝ ՀՀ իշխանութիւններն ընդամէնը ժամավաճառութեամբ են զբաղւած: «Խաղաղութեան խաչմերուկ»-ն ընդամէնը հանրութեան ուշադրութիւնը շեղելու ու փիառւելու նպատակ է հետապնդում, ինչպէս որ խաղաղութեան դարաշրջանի թէզն էր:*

**«Փաստ»**

Հրանտ Մելիք-Շահնազարեան.

# «Պատահական չեն արցախցիների դէմ քարոզչութիւն տանում. նոր ռումբ են տեղադրում մեր պետութեան տակ»



*Քաղաքագէտ Հրանտ Մելիք-Շահնազարեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրում է.*

*«Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն առաջինն ընդունած ժողովրդիս մի հատւածը քննադատում է բոլորովին վերջերս հարիւրաւոր զոհեր տւած, բռնի տեղահանւած, ամէն ինչ կորցրած, փողոցներն ընկած իր միւս հայրենակիցներին: Քննադատելը ո՞րն է՝ կոնկրետ ատելութիւն են տարածում արցախցիների նկատմամբ:*

*Բողոքում են, որ մեր ժողովրդի դաւաճանւած հատւածն ուզում է քիչ թէ շատ լաւ տներում ապրել, նորմալ աշխատանք ունենալ, իրեն նորից մարդ զգալ... Թէ բա՝ ինչ տալիս ենք, դրանով բաւարարւէք: Չէ՞ք ուզում՝ գնացէք Ադրբեջանի անձնագիր վերցրէք ու ձեր Ղարաբաղում ոնց ուզում էք ապրէք:*

*Ու այսպէս մտածող աղբը սկսում է գլուխ բարձրացնել: Երեւի կարծում են՝ երկու ամիսը բաւական էր, որպէսզի արցախցիները մոռանան իրենց զոհւած հարազատներին, կորցրած գիւղերն ու քաղաքները, Հայրենիքը: Մտածում են, որ արդէն շատ հանդուրժեցին իրենց համար այդքան ատելի արցախցիներին: Դրանցից ձերբազատւելու ժամանակն է:*

*Նման տգէտները, իհարկէ, չեն հասկանում, թէ ինչ նոր ռումբ են տեղադրում մեր պետութեան ու ժողովրդի տակ: Դրանք սկի չեն էլ պատկերացնում, թէ այդ ռումբի պայթիւնն ինչ աւիրածութիւններ է պատճառելու մեր երկրին: Բայց միւսները պէտք է դա լաւ հասկանան ու թոյլ չտան, որպէսզի հասարակութիւնը հերթական աւերիչ ներազդման ենթարկւի:*

*Նախ, արցախցիների վարքի մասին: Ես ոչ միայն չեմ բացառում, այլեւ լաւ գիտեմ, որ նրանց մէջ կան մեղմ ասած շատ անշնորհք մարդիկ: Բայց դրանք բացառութիւններ են: Ու պէտք չի մեր 150 հազար հայրենակիցներին ճանաչել եւ/կամ բնութագրել այդ բացառութիւնների վարքագծով: Նման բան անողները մեր ժողովրդի թշնամիներն են: Ու նրանք պատահական չեն այդպիսի քարոզչութիւն իրականացնում: Դա մեր թշնամիների կողմից կազմակերպւած քայքայիչ գործունէութիւն է, որն արդէն տարիներ շարունակ իրականացւում է ժողովրդի մէջ:*

*Երկրորդը, այո՛ արցախցիները պէտք է նորմալ պայմաններում ապրեն, լաւ վարձատրւող աշխատանք ունենան ու պէտք է կարողանան յարմարւել նոր իրողութիւններին: Ամբողջ ժողովուրդը պէտք է այդպէս ապրի, բայց յատկապէս արցախցիները: Ինչո՞ւ յատկապէս արցախցիները: Երկու պատճառով: Որովհետեւ դա է պահանջում սովորական մարդասիրութիւնը (էլ չեմ խօսում ներազգային համերաշխութեան ու սրտացաւութեան մասին) եւ երկրորդ՝ որովհետեւ չի կարելի թոյլ տալ, որպէսզի առանց այն էլ դաւաճանւած ու կոտրւած մեր ժողովրդն ունենայ թշւառացած ու մերժւած սգաւորների այդպիսի մեծ զանգւած: Դա կը կործանի բոլորին:*

*Ցաւը վերապրել է պէտք: Սովածներին կերակրել, իսկ հիւանդներին բժշկել է պէտք: Քեզնից պոկել ու դիմացինիդ տալ է պէտք: Քո հաշւին մերձաւորիդ խնդիրները լուծել է պէտք: Լաւ քրիստոնեայ, լաւ մարդ ու լաւ հայ լինել է պէտք: Բաւական է արդէն Տիրոջ ուղին մերժելով, սատանայի ճամբէքով քայլել: Տեսանք որտեղ հասցրեց մեզ այդ ատելութիւնը: Քի՞չ է: Էլի՞ ենք ուզում կոտորւել»:*

**Oragir.news**

Վարդան Օսկանեան.

# «Ադրբեջանական ԶՈւ-ն հայկական տարածքներից դուրս չի գայ, պէտք է ճանապարհային քարտէզ կազմել»

*Թշնամու հետ ուժային հաւասարակշռութեան այսպիսի խախտման պայմաններում ադրբեջանական զինուժը հայկական տարածքներից դուրս չի գայ, ուստի պատրանքներին տուրք տալու փոխարէն, անհրաժեշտ է տեւական ծրագիր ունենալ ու դրանով առաջ շարժւել: Իր տելեգրամային ալիքում գրել է իրանագէտ Վարդան Օսկանեանը:*

*«Եթէ ինչ-որ մէկը հաւատում է, թէ թշնամու հետ ուժային հաւասարակշռութեան նման խախտման պայմաններում Բաքւի բարբարոսական վարչախումբը սեփական կամքով, որեւէ թղթով կամ «միջազգային հանրութեան» ճնշման տակ դուրս է բերելու իր զինւած բաշիբոզուկներին Հայաստանի Հանրապետութիւնից բռնազաւթած թէկուզ մի սանտիմետր տարածքից, ապա նա առնւազն մանկամիտ է:*

*Այդ բաշիբոզուկներին Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների հայկական սրբազան հողից դուրս շպրտելը միայն ու միայն մեր գործն է լինելու, իսկ դա անելն անհնարին կը լինի, քանի դեռ մեզանում առաջնահերթութիւն է մանկամիտ պատրանքներին տուրք տալը, այլ ոչ թէ Հայաստան պետութիւն-ամրոցի կառուցման նիւրական տեսլականը,*



*ծրագիրը եւ ճանապարհային քարտէզը կազմելն ու դրանով մեթոդաբար առաջ շարժւելը»,- գրել է իրանագէտը:*

**Yerkir.am**

# Կարմիր Խաչի աշխատակիցներն այցելել են Բաքւում կալանաւորւած արցախցի նախկին պաշտօնեաներին



*Նոյեմբերին ԿԽՄԿ-ի աշխատակիցները կրկին այցելել են Բաքւում գտնւող արցախցի նախկին պաշտօնեաներին: Այս մասին յայտնել է ԿԽՄԿ-ի Ադրբեջանի ներկայացուցչութեան հասարակայնութեան հետ կապերի բաժնի ղեկավար Իլահա Հուսէյնովան:*

*«ԿԽՄԿ-ն իր մանդատի համաձայն գնահատում է նման այցելութիւնների ընթացքում կալանաւորւած անձանց հանդէպ վերաբերմունքը եւ պահման պայմանները: ԿԽՄԿ-ն նաեւ նպաստում է անձանց ընտանիքների հետ կապի շարունակականութեանը: ԿԽՄԿ ընթացակարգերին համապատասխան տեսակցութիւնները կատարւում են միայն կալանաւորի հետ»,- ասւում է տեղեկատւութեան մէջ:*

**Alphanews.am**



# 16 ամիս անց չեն կարողանում գոնէ շինծու պատճառ գտնել

***««Սփիւռքի ձայն» հաղորդաշարի հարցերին պատասխանել է ՀՅԴ Բիւրոյի անդամ, Ֆրանսիայի Հայկական կազմակերպութիւնները Համակարգող խորհրդի համանախագահ Մուրադ Փափազեանը:***

***Յիշեցնենք, որ նրա մուտքը Հայաստան արգելուած է: ՀՀ կառավարութեան այդ որոշումը նա բողոքարկել է եւ դատարանը քննում է նրա հայցը: Մենք մի քանի հարց ենք տուել նրան այդ վարոյթի եւ առհասարակ:***

*- Պարոն Փափազեան, Ձեր գործը քննող դատաւորը փոխուեց: Ինչ է կատարւում փակ դռներից այն կողմ՝ նիստը դռնփակ է եւ լրագրողները չեն կարող ներկայ լինել դատավարութեանը:*

*-Այո, իմ հարցը «յոյժ գաղտնի» հարց է: Հերթական նիստը նոյեմբերի 23-ին էր, եւ ԱԱԾ-ն նորից եկել էր առանց իմ մուտքի արգելքի պատճառների հիմնաւորման: Դատաւորը 10 օր ժամանակ տուեց ԱԱԾ-ին՝ բացակայող փաստաթուղթը գործին աւելացնելու համար: Յաջորդ նիստը նշանակուած է յունուարի 25-ին, եւ կարծում եմ, կը պարզուի՝ ես իրաւասո՞ւ եմ մասնակցել դատական նիստերին (նախորդ դատաւորը թոյլատրել էր, որ Մուրադ Փափազեանն օնլայն մասնակցի դատավարութեանը, ակնկալում է, որ նոր դատաւորն էլ կը թոյլատրի՝ Ն.Վ.): Բոլորին պարզ է, որ որեւէ պատճառ, հիմնաւորում չկայ: Սա քաղաքական հարց է. Փաշինեանն ինձ պատժում է Արցախի հարցում իմ դիրքորոշման ազատ արտայայտման համար: Փաշինեանի համար անընդունելի է, որ դրսից որեւէ մէկը Հայաստանի ու Արցախի շուրջ կարծիք է յայտնում: Փաշինեանն ինքը իշխանութեան եկաւ ազատութեան, դեմոկրատիայի խոստումներով, սակայն հիմա ինքը դէմ է գործում իր սկզբունքներին:*

*-Կարծում էք, որ դա պուտ Փաշինեանի՞ ցանկութիւնն է: Մենք տեսնում ենք, որ Փաշինեանն արդէն իրականութիւն է դարձնում Ալիեւ-Էրդողան տանդեմի փոքր ու մեծ ցանկութիւնները: Ձեր հարցն այս շրջանակներում չի՞ տեղաւորւում: Չէ՞ որ Դուք, բացի Արցախի խնդրից, նաեւ Հայ Դատի համար պայքարող կենտրոնական դէմքերից էք:*

*- Այո, այս կասկածը միշտ կայ, եղել է: Դա եղաւ Էրդողանի հետ հեռակայ հանդիպումից յետոյ: Իսկ Էրդողանը միշտ յայտարարում է, որ Սփիւռքն է խանգարում հայ թուրքական հաշտեցմանը: Ես վերջերս գիրք եմ հրապարակել Էրդողանի մասին: Նա ուզում է թուլացնել հայկական Սփիւռքը, դրա համար որպէս գործիք օգտագործում է Փաշինեանին: Փաշինեանն իր յանձնակատարի միջոցով քայլեր է անում թուլացնելու դասական սփիւռքը, որ հալածէ հայկական հոգին, եւ ստեղծի իր ներքին՝ Փաշինեանական Սփիւռքը: Հինգ տարի է դա ձախողման է ենթարկուած: Մենք իսկապէս պայքարում ենք ի նպաստ Հայաստանի, Արցախի եւ Հայ Դատի: Ես կոչ եմ անում պարոն Փաշինեանին, որ վերանայի իր մօտեցումը եւ ԱԱԾ-ին ցոյց տայ ճիշտ ճամբան: Որովհետեւ արդարադատութիւնը երբեք պատճառ չի գտնի, եթէ ես յանցագործ չեմ: Ես Հայաստանի եւ Արցախի զինւոր եմ: Սա ոչ մի տեղ չտանող ճանապարհ է: 16 ամիս անց չեն կարող շինծու պատճառ գտնել: Սա վնասում է Հայաստանի ժողովրդավարութեան վարկանիշին, վարկաբեկւում է երկիրը: Մենք պէտք է նոր էջ բացենք, որ Հայաստանն այս վիճակից դուրս գայ:*

*-Ձեր ձայնը լսելի է ֆրանսիական կառավարութիւնում: Դուք այդտեղ պատահական մարդ չէք՝ հայկական համայնքի գլխաւոր դերակատարներից էք: Ֆրանսիական կառավարութիւնը համարժէք քայլեր իրականացնո՞ւմ է Ձեր առջեւ դրուած արգելանքի առընչութեամբ: Չէ՞ որ Դուք Ֆրանսիայի քաղաքացին էք: Իսկ Մակրոնը Հայաստանի վարչապետի հետ է մտերիմ:*

*-Այո, Ֆրանսիան եւ Հայաստանը բարեկամ երկրներ են շնորհիւ մեզ՝ հայկական Սփիւռքի: Եթէ այսօր Փաշինեան-Մակրոն լաւ յարաբերութիւններ կան, դա Սփիւռքի երկարատեւ աշխատանքի շնորհիւ է: Դա պէտք է լաւ իմանայ Փաշինեանը: Երբ հանդիպեցի Մակրոնի հետ, ինքը բարձրացրեց այդ հարցը: Ես ամաչում եմ Հայաստանի համար, Հայաստանի կառավարութեան համար, որ այսպիսի հարց ստեղծեցին: Եւ իրենք դա չեն հասկանում: Երկու անգամ Մակրոնն ինքը բարձրացրեց այդ հարցը, ասելով, որ անընդունելի է: Ես չեմ ուզում, որ Հայաստանի եւ Ֆրանսիայի յարաբերութիւնները վատանան: Ֆրանսիան պէտք է մնայ Հայաստանի բարեկամ երկիրը: Այն մեզ համար կարեւոր ռազմավարական եւ բարեկամ երկիր է»:*

**Yerkir.am**

---

## *Դերենիկ Մելիքեանի ոսպնեակից*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱԿ ԻՐԱԿԱՆ ՈՒ ՎՍՏԱՀԵԼԻ ՀԱՐԵՒԱՆԸ...

**Դ. Մ.**
***Պատմական գիտութիւնների թեկնածու***



*1- 2018-ի Հայաստանեան «թաւշեայ յեղափոխութիւն»-ը սկզբից եւեթ արեւմտամէտութեան վաւերականութիւն գտաւ ժամանակին ԱՄՆ Ազգային անվտանգութեան խորհրդի պետ, ընդգծուած իսրայէլամէտ եւ իր դիւանագիտական կարիերայում յայտնի՝ որպէս խիստ հակա-Իրան Ջոն Բոլտոնի Երեւան այցով:*

*Թէ ի՞նչ հեռանկարներ ուրւագծեցին այսպէս ասած՝ բոլտոնեան անվտանգային չափագրումները ՀՀ-ի ապագայի հաշւին, պարզ դարձաւ յաջորդող 5-6 տարիներում: Ժամանակաշրջան, որն էլ ըստ ամենայնի Հայաստանի ու հայութեան համար աննախադէպ վտանգներով ուղեկցուեց ու այսօր եւս շարունակւում է լրջագոյնս սպառնալ երկրի հողային ամբողջականութեանն ու հայոց Պետականութեան պահպանմանը...:*

*2- Դիւանագիտական ու ռազմաքաղաքական բազմաթիւ հնարքների գործադրմամբ՝ ՀՀ-ի անվտանգութեանը սպառնացող առզոյ միտումների կենսագործումը մինչ օրս կարելի է եղել կանխել՝ Հայաստանի հարաւային դարպաս ու շնչերակ՝ Իրանի շնորհիւ: Աւելի շուտ՝ նրա հանրայայտ ու բազմիցս բարձրաձայնած «ԿԱՐՄԻՐ ԳԻԾ»-ի շնորհիւ, որն ինքնին պարունակում է ողջ կովկասեան տարածաշրջանի աշխարհագրա-քաղաքական էական եւ միեւնոյն ժամանակ անփոփոխ դրոյթներ:*

*3- Այս համատեքստում ՀՀ-ի եւ Իրանի շահերի համընկնումը բխում է երկուստեք եւ խոշոր հաշւով քաղաքական համատեղ առաջնահերթութիւններից, որոնք այլապէս պատմականօրէն խիստ հակադրութեան մէջ են եղել Պանթուրանականութեան հետ: Այս վերջինը, սակայն, յատկապէս արցախեան պատերազմից ու հայաթափումից յետոյ, թուրք-ադրբեջանական դաշինքի կողմից արդէն իսկ կենսագործելի ծրագիր է համարւում...:*

*4- Սոյն ծրագրի այսպէս ասած «Զանգեզուրեան» սցենարը թէեւ ժամանակաւորապէս բացառուեց նոյն Իրանի անզիջում կեցուածքի շնորհիւ, բայցեւայնպէս շրջանառութեան մէջ է դրուել այսպէս ասած՝ «Խաղաղութեան խաչմերուկ»-ի սցենարը, որն ցաւօք՝ առաջադրուել է նոյնինքն Հայաստանի վարչապետի պաշտօնն զբաղեցնող ն. փաշինեանի կողմից:*

*5- ն.փ.-ն, ինչ խօսք՝ անճարակութիւնից ելած՝ կառչած է մնում նոյն արեւմտամէտութեան կոնցեպտին ու այդ ճամբին անընդհատ տուրք է տալիս արեւմուտքի (ՆԱՏՕ-Եւրոմիութիւն) տարածաշրջանային խրտուիլակներ՝ էրդողանին ու ալիեւին:*

*6- Տւեալ դէպքում եւ զուգահեռաբար թուրք-ադրբեջանական դաշինքի ռազմա-քաղաքական մշտական աջակից՝ սիոնիստական Իսրայէլը, մէկ կողմից արցախեան պատերազմում անմիջական մասնակցութեամբ ու արդիական զէնքերի մատակարարմամբ հակահայ դիրք է որդեգրում, իսկ միւս կողմից Ադրբեջանում սնւող ու ձեւաւորւող պանթուրքիստներին՝ Իրանի դէմ սադրանքներում քաղաքական ու քարոզչական աջակցութիւն ցուցաբերելով, հակա-Իրան իր մշտական քաղաքականութիւնն է գործադրում...:*

*7- Այս իրողութիւններից ելնելով էլ՝ Հայաստանի իշխանաւորները անհրաժեշտաբար պէտք է, որ առաւել քան երբեւէ գիտակցեն ու համապատասխան քայլերի դիմեն՝ Իրանի հետ համատեղ շահերի առաջմղման համար: Շահեր, որոնք նաեւ ու մանաւանդ ակունք են առել երկու բարեկամ ու հինաւուրց ժողովուրդների քաղաքակրթական- մշակութային բազմապիսի առնչութիւններից:*

*8- Գալով ՀՀ-ի միւս՝ հիւսիսային անմիջական հարեւաններ՝ Վրաստանին ու երկարամեայ դաշնակից համարւող Ռուսաստանին, հարկ է յուշել, որ առաջինն տասնամեակներ շարունակ տարածաշրջանային տնտեսա-քաղաքական որեւիցէ գործարքի դէպքում մշտապէս ինտեգրուել է թուրք-ադրբեջանական ծրագրերին ու մինչեւ իսկ արցախեան պատերազմում հայավնաս դիրք որդեգրել...: Իսկ երկրորդը՝ Ռուսաստանը, անկախ դաշնակցային իւրայատուկ կոշտ ու գաղութարար պահուածքից, վերջին ժամանակաշրջաններում, ելնելով նաեւ զլոբալ՝ ուկրաինական թնջուկի մէջ ընկղմուած լինելուց, որդեգրել է առաւելեւս թուրքամէտ-ադրբեջանամէտ կեցուածքներ, տուրք տալով նաեւ վերջիններից առեւտրա-տընտեսական կախուածութեանը...:*

*9- Թէ որքա՞ն է մարդկային ազնուութիւնն համատեղելի շահակցական ու ինչ-որ տեղ բարոյազուրկ քաղաքականութեան հետ, ապացուցում է երկրների եւ ժողովուրդների երկկողմ ու բազմակողմ յարաբերութիւններում: Հայաստանի նկատմամբ, սակայն, Իրանի Իսլամական Հանրապետութեան որդեգրած տասնամեակների քաղաքականութիւնը (անկախ նրանից, որ երկրի համակարգային դրուածքը կրօնապետական է), բխել է Ազգային երկկողմ շահերի պաշտպանումից ու կրել է գերազանցապէս ազնիւ, բարոյական եւ ոչ լարախաղաց բնոյթ: Դրա վառ ապացոյցերն են նոյնինքն Իրանի հոգեւոր առաջնորդի Հայաստան-Իրան հազարամեայ սահմանների անխախտելիութեան մասին բարձրաձայնումն ու երկու երկրների համար հաւասարապէս ռազմավարական եզակի նշանակութիւն ունեցող Սիւնիքում իրանական հիւպատոսարանի կառուցում-հիմնումը:*

*10- Ահաւասիկ, վերոգրեալ փաստերը հաշւի առնելով՝ երիցս պարզորոշ է դառնում, որ ներկայիս աշխարհագրա-քաղաքական, ռազմական-զինւորական ու դիւանագիտական բարդագոյն պայմանների, ասել է թէ՝ վտանգների առկայութեան դէպքում, դրանք դիմագրաւելու յուսալի գրաւականը նախ՝ ՀՀ-ում ազգային ուրոյն, համարձակ եւ ոչ-պարտւողական քաղաքականութիւն որդեգրող իշխանութեան ձեւաւորումն է եւ ապա՝ ի դէմս Իրանի՝ իրական, ազնիւ ու վստահելի հարեւանի առկայութիւնը...:*

---






# ԱՐՑԱԽԸ
## ՀԱՅՐԵՆԻՔ ՉԷ՞

*2023 թ. նոյեմբերի 27-ին Նիկոլ Փաշինեանը Երեւանի թիւ 122 դպրոցում, մասնաւորապէս, յայտարարել է. «Հայրենիքը պետութիւնն է…Քո որեւէ նախնի ուղիղ կապ ունի հէնց այս պետութեան հետ»:*

*Հարկ է նշել, որ «Հայրենիքը պետութիւնն է» արտայայտութիւնը հակասում է հայոց պատմութեան դասագրքային մասնագիտական ըմբռնմանը: Տարիներ, տասնամեակներ շարունակ հայոց պատմութեան դասագրքերում արձանագրուել է, որ մեր պատմական հայրենիքը աշխարհագրական այն տարածքն է, որտեղ կազմաւորուել, զարգացել ու իր քաղաքական կեանքն է կերտել հայ ժողովուրդը:*

*Այս համատեքստում հարց է առաջանում. Արցախը, Նախիջեւանը, Արեւմտեան Հայաստանը, որտեղ կազմաւորուել, զարգացել եւ իր քաղաքական կեանքն է կերտել հայ ժողովուրդը, հայ ժողովրդի հայրենի՞քն են, թէ հայ ժողովրդի հայրենիքը չեն: Իմ խորին համոզմամբ նշուածները, անտարակոյս, հանդիսանում են հայ ժողովրդի հայրենիքը, որոնք ներկայ պահին օկուպացուած են օկուպանտ եւ ցեղասպան Թուր-*




*քիայի եւ նրա կողմից արհեստականօրէն ստեղծուած ադրբեջան անուանով կեղծ, ահաբեկչական կազմաւորման կողմից:*

*«Հայրենիքը պետութիւնն է» արտայայտութեամբ Նիկոլ Փաշինեանն, ըստ էութեան, փորձում է հայ ժողովրդի շրջանում, մասնաւորապէս՝ պատանիների եւ երիտասարդների շրջանում, մոռացութեան տալ հայ ժողովրդի հայրենիքի այն հատուածները, որտեղ կազմաւորուել, զարգացել ու իր քաղաքական կեանքն է կերտել հայ ժողովուրդը: Նկատի առնելով Արցախի Հանրապետութեան հետ տեղի ունեցած աղէտը՝ ստի, կեղծիքի, տառապանքի, մահուան, դժբախտութեան, հայրենազրկման խորհրդանիշն իր յայտարարութեամբ*

(Շար. 6-րդ էջում)

# Տեղի է ունեցել «Հայ հասարակական-քաղաքական միտքը 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի առաջին կէսին. պատմութիւն եւ արդիականութիւն» խորագրով գիտաժողովի յօդուածների ժողովածուի շնորհանդէսը








«Համազգային» հայ կրթական եւ մշակութային միութեան Երեւանի գրասենեակի եւ Խաչատուր Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմութեան ֆակուլտետի համատեղ նախաձեռնութեամբ՝ նոյեմբերի 24-ին ՀՊՄՀ դահլիճում կայացաւ «Հայ հասարակական-քաղաքական միտքը 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի առաջին կէսին. պատմութիւն եւ արդիականութիւն» խորագրով գիտաժողովի յօդուածների ժողովածոյի շնորհանդէսը:

Ժողովածուի մասին խօսք ասացին «Համազգային»-ի կենտրոնական վարչութեան անդամ Արտաշէս Շահբազեանը, «Համազգային»-ի Երեւանի գրասենեակի տնօրէն Ռուզան Առաքելեանը, գրականագէտ Դաւիթ Գասպարեանը, նոյն ԲՈՒՀ-ի Համաշխարհային պատմութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Խաչատուր Ստեփանեանը:

«Այս գիրքը մեր օրերի համար փընտըրւող ու անհրաժեշտ գիրք է, այն նաեւ կարող է ուղեցոյց հանդիսանալ մեր պատմաբանների ու քաղաքական գործիչների համար, որպէսզի վերջապէս կարողանան հասկանալ մի ճըշմարտութիւն՝ մինչեւ մեզանում ազգային գաղափարախօսութիւնը ձեւ ու բովանդակութիւն չունենայ, մենք չենք կարողանայ հասարակութեանը համախմբել»,- նշել է Ռուզան Առաքելեանը՝ շեշտելով, որ պէտք է կարողանալ դասեր առնելով անցեալից՝ ճիշտ քաղաքական ուղով ընթանալ:

Արտաշէս Շահբազեանն էլ, անդրադառնալով անցեալի ու ներկայի մարտահրաւէրներին, կարեւորեց. «Միայն լուսաւորեալ ու կրթւած ժողովուրդն է, որ ունենում է ինքնութեան գիտակցութիւն, ազգային իղէալի գիտակցութիւն, ազգային տեսլական: Երբ այդ գիտակցութիւնը ժողովրդի մէջ պակասում է, ազգի ճակատագիրը դառնում է անորոշ»: Շահբազեանը յոյս յայտնեց, որ ժողովածոն հնարաւորութիւն կը տայ ուսումնասիրելու անցեալը, վերլուծելու եւ կատարելու ճիշտ հետեւութիւններ՝ յատկապէս ներկայիս ներքին եւ արտաքին բազում մարտահրաւէրների պայմաններում:

Պատմութեան եւ հասարակագիտութեան ֆակուլտետի դեկան Էդգար Յովհաննիսեանը կարեւորեց «Համազգային»-ի հետ համագործակցութիւնը, ինչպէս նաեւ գրքի հրատարակումը՝ նշելով, որ հայ քաղաքական եւ հասարակական մտքի ակունքները բիւրեղանում են հէնց այդ շրջանում:

Բոլոր ներկաները «Համազգային»-ի Երեւանի գրասենեակի կողմից ժողովածոյի օրինակներ նւէր ստացան:

**Yerkir.am**

# Գիւմրեցի արւեստագէտը ստեղծում է հայ յայտնիների ասեղնագործ դիմանկարները





Կտաւ, սեւ թել ու հանգստութիւն՝ պարտադիր պայմաններ են տարբերւող դիմանկարներ ստանալու համար: Չունենալով նկարչական կրթութիւն՝ Մարի Մկրտչեանը կարող է թելերի օգնութեամբ լուսանկարներից չտարբերւող պատկերներ ստանալ: «Իմ ասեղըն իմ վրձինն է»,- զրոյցի ժամանակ նշել է Մարին:

Աշխատանքի մէջ ամենաբարդը հայեացքն ստանալն է, երբ հայեացքը ստացւեց, ամէն ինչ արդէն դիւրին է դառնում: Ստւերները՝ հաստ ու բարակ թելակարից է ստանում: «Դժւարը հայեացքը ստանալն է: Հէնց հայեացքն է, որ կտաւը բնական է դարձնում»,- ասել է արւեստագէտը:

Դիմանկարները շատ բնական են, երբեմն նոյնիսկ պէտք է շատ ուշադիր զննել՝ հասկանալու համար, որ դա սպիտակ կտաւի վրայ սեւ թելերով արւած ասեղնակար է:

Մասնագիտութեամբ գոբելենագործ-ժանեակագործ է: Աւելի ուշ վերապատրաստւել է որպէս դիզայներ մոդելաւորող, բայց միւսներից տարբերւելու ձգտումն ու անվերջ ստեղծագործելու



ցանկութիւնն է, որ Մարիին «ստիպեցին» սեփական ինքնատիպ ձեռագիր-ոճը ունենալ:

Իսկ ամէն ինչ սկսւեց, երբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գիւմրու Հայորդեաց Տանը աշխատած տարիներին տեսնում է սաներից մէկի՝ Աւետիք Իսահակեանի դիմանկարը ու որոշում իրովի՝ ասեղի ու թելի օգնութեամբ ստանալ Վարպետի դիմանկարը: Յետոյ, արդէն յայտնւում են միւս յայտնիները՝ Կոմիտաս, Ազնաւուր, Միհր Մկրտչեան, Սեւակ, Բաբաջանեան եւ այլն: Հեղինակն արդէն դժւարանում է թւարկել՝ աւելի քան քառասունն են:

Թէեւ նորաձեւութեան ոլորտում է 2002 թւականից, դիմանկարներ սկսել է ասեղնագործել 2016 թւականից: Անկեղծանում է՝ դեռ շատ յայտնիներ կան, որոնց չի անդրադարձել՝ առաջիկայում մտածում է Մոնթէի ու Սիլւա Կապուտիկեանի դիմանկարների մասին:

Իւրաքանչիւր դիմանկար Մարիից մէկ շաբաթ է պահանջում: Հայ

(Շար. 6-րդ էջում)

# Հանդիպում՝ «ԱԼԻՔ» օրաթերթի վաղեմի բաժանորդներից Ռոզիկ Գասպարեանի հետ



Իրանահայ համայնքում, ի մասնաւորի աւելի տարեց հայրենակիցների շրջանակում դժւար է գըտնել որեւէ իրանահայի, ում բնակարան մուտք գործած չլինի «ԱԼԻՔ» օրաթերթը: Ահաւասիկ, մեր հայրենակիցներից է Ռոզիկ Գասպարեանը, ով դեռեւս ստանում է «ԱԼԻՔ» եւ փայփայում այն: Առիթը պատեհ համարելով, այցելել ենք աւելի քան 80 տարեկան սիրելի բաժանորդի բնակարան եւ զրուցել նրա հետ: Ռոզիկ Գասպարեանը իր հետ ունեցած զրոյցի ընթացքում, նշեց, որ իր հայրը, ով ժամանակին Թեհրանում եղել է դերձակ-վարպետ, ապա ունեցել է ոսկերչատուն, միշտ գնել է «ԱԼԻՔ»-ը եւ տանը եւս երեխաների համար ընթերցել այն, որով ընտանիքի անդամների մօտ առաջացել է յատուկ սէր ու կապւածութիւն՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու, ազգային արժէքների, հայոց գիր ու գրականութեան, ազգային ու կրօնական աւանդութիւնների նկատմամբ: Զառամեալ բաժանորդը նշեց, քանի որ իր բնակարանը մօտ է մեր եկեղեցիներից մէկին, եւ ինքը արդէն երկար ժամանակ է ինչ դժւարանում է բնակարանից դուրս գալ, ուստի իւրաքանչիւր կիրակի կամ ուրբաթ օրերը, երբ լսում է եկեղեցու զանգերի ղօղանջի ձայնը, դա իրեն բաւարարում է: Նա պատմեց իր երիտասարդ տարիներից, երբ իր ընտանիքի հետ միասին, Ս. Աստւածածին տօնի առիթով խաղող էին նւիրում եկեղեցուն, եւ իր ծնողների մահից յետոյ, ինքը եւս շարունակել է այդ աւանդոյթը, մինչ վերջին տարիները:

Ռոզիկ Գասպարեանի սենեակում սեղանի վրայ տեղադրւած էր Ս. Աստւածածնի եւ Յիսուս Քրիստոսի արձանները: Երբ այդ մասին հարցրեցինք, նա ասաց, քանի որ չի կարողանում գնալ եկեղեցի, ուստի այդ արձանները իր համար դարձել են սրբութիւն: Նա մեզ ներկայացրեց նաեւ ժամանակին իր հօր ոսկերչատան եւ նրա ձեռքով պատրաստւած խաչերը, որոնք պահում է իր սրտի մօտ որպէս մասունք:

....

***«ԱԼԻՔ»-ը եւս իր գնահատանքն է յայտնում իր վաստակաւոր բաժանորդին, նրան մաղթելով առողջութիւն:***

**Թղթակցութիւնը կազմեց
ԿԱՐԻՆԷ ԴԱՒԹԵԱՆԸ**

## Ծովինար Բարխուդարեան.
# «Ես չգիտեմ աշխարհում կա՞յ մի ազգ, որ սեփական հողը սուվիներ է դարձնում...»



Արցախցի լրագրող Ծովինար Բարխուդարեանը պատմում է, թէ ինչպէս են հայրենիքից դուրս գալու ճանապարհը եւ ինչեր է վերցրել իր հետ՝ Արցախից հեռանալիս:

«5-րդ ալիքով» «Ականատես» Ծովինար Բարխուդարեանը պատմում է, երբ բացւում է փակ ճանապարհը... պատերազմներում, բլոկադայում ողջ մնացածները կազնում են սարսափելի ընտրութեան առաջ՝ ինչ անել. գնա՞լ, թէ՞ մնալ, դաւաճանե՞լ կենսակերպին, թէ՞ հայրենիքին:

Մեր դէպքում մահից փախածները գնում էին դէպի պայմանական ազատութիւն. դէպի մի կամուրջ, որտեղ կանգնած մահասփիւռների կամեցողութեամբ կամ կանցնէիր, կամ ոչ:

Մեծ աղջիկս Երեւանում է, երրորդ կուրսի ուսանող է: Զանգեց, ասաց մամ՝ ես չկարողացայ գալ տուն, խնդրում եմ՝ պապիկիս այգուց մի բուռ հող կը բերես:

Մենք դարձանք մեր հողերը փոքրիկ տոպրակներում տանող ժողովուրդ: Ես չգիտեմ աշխարհում կա՞յ մի ազգ, որ սեփական հողը սուվիներ է դարձնում...»:

**Panorama.am**

# Ի՞նչ է անում «սատանան», երբ մնում է անգործ …

ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Մեր մամուլում ընդունուած չէ Ազգային անվտանգութեան ծառայութեան մասին գրել ու խօսել, առաւել եւս՝ քննադատել: Միայն՝ պաշտօնական աղբիւրներից բաց թողնուած տեղեկութիւններ ու հաղորդագրութիւններ, երբեմն՝ պարագայական ակնարկներ: Սովետական տխրահռչակ KGB-ի օրերից մնացած կարծրատիպը շարունակում է կարծըր մնալ, եւ մարդիկ, նոյնիսկ ամէն բանի տակ խնտրիգ փնտրող լրագրողները, ձեռնպահ են մնում այդ ծառայութեան վերաբերեալ բարձրաձայնումներ, առաւել եւս բացայայտումներ անելուց: Վերջապէս՝ գաղտնի է այդ ծառայութիւնը. մի անզգոյշ քայլ կամ տուեալ՝ կարող է վնաս հասցնել երկրին ու պետութեանը: Մանաւանդ որ նման արարքը ենթակայ է պատիժի՝ գրըւած եւ անգիր օրէնքով:

Չեմ պատրաստւում որեւէ բացայայտում անելու, քանի որ… բացայայտելիք որեւէ բան չունեմ: Բայց ուզում եմ մի քանի դիտարկումներ անել, աւելի ճիշտ՝ հարցադըրումներ, մեկնելով մեր երկրի անվըտանգութեան շահերից ու մտահոգութիւններից: Մեկնելով նաեւ մեր մասնագիտութեան մէջ ընդունուած այն սկզբունքից, որ երբեմն հարցն ու հարցադրումը աւելի կարեւոր է, քան պատասխանը, մանաւանդ երբ պատասխան չես էլ ակնկալում:

Աւելի թանձր գոյներով չես կարող նկարագրել մեր երկրի վիճակը, քան արդէն իսկ կայ: Պարտութիւններ, զոհեր, առեւանգուածներ, կորուստներ, բռնագաղթեցւած մի ողջ ժողովուրդ, նորանոր սպառնալիքներ, ներքին անորոշութիւն, արտաքին ճնշումներ, պատերազմի վերահաս վտանգ, շուռ տուած անվտանգութիւն, մշուշոտ ապագայ: Ու բնական մղումով մեր հայեացքը թեքւում է դէպի ուժային գլխաւոր կառոյցներ՝ բանակ եւ ԱԱԾ: Առաջինը չգիտենք ի՞նչ կարող է անել, երկրորդը չգիտենք՝ ի՞նչ է անում: Առաջինը բաբոյալքուած, երկրորդը՝ ինքնալքուած, գոնէ, ինչպէս ընդունուած է ասել, առերեւոյթ: Եւ սա, ինչպէս սարկաստիկ ծանօթ երգում է հնչում, մեր երկրում «թուրքերն են ֆոֆռում», եւ ոչ միայն թուրքերը…

Մեր թերթի նախորդ համարի այս եւ յաջորդ էջերում, օգտւելով միջազգային բաց աղբիւրներից, արտառոց փաստեր էինք բերել մեր երկրի դէմ դեռ 9-10 տարի առաջ ծրագըրւած եւ գործադրւող միջազգային, աւելի շուտ՝ բազմազգային դաւադըրութեան վերաբերեալ: Այդ դաւադըրութեան մէխը նաւթա-գազազային այն խոշոր գործարքներն էին, որոնց շահառուներն էին ու ե՛ն բրիտանական, ռուսական, ամերիկեան, հոլանդական, նոյնիսկ նորւեգական ու ֆրանսիական խոշորագոյն ընկերութիւններ՝ ադրբեջանական Socar-ի եւ ալիեւ-փաշայեւեան կլանի հետ ձեռք-ձեռքի տուած: Բազմամիլիարդանոց այդ ծրագրերը, դրանց իրագմանը մասնակից անձնաւորութիւնները, ինչպէս, օրինակ, Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերը, բացառապէս ստուերում չեն գործել, բաց աղբիւրները հետեւել եւ արձագանգել են դրանց: Իսկ մեր գաղտնի ծառայութիւնները, ներառեալ համապատասխան երկրներում աշխատող մեր դիւանագէտները, հետեւե՞լ են դրանց, մշակել-վերլուծե՞լ են դրանք, նախատեսե՞լ են գալիք աղէտները՝ 44-օրեայ պատերազմը եւ միւս նախայարձակումները:

Սրամիտ մի ընկեր պնդում է, որ Նոյեան տապանը չէր լինի, նրա ուղեւորները չէին փրկւի, եթէ Նոյը նախապէս իրազեկւած չլինէր: ԱԱԾ-ն ժամանակին պետական համապատասխան մարմիններին իրազեկե՞լ է «ջրհեղեղի» մասին: Եթէ այո՝ ապա 2020 թ. սեպտեմբերի 27-ին մեր բանակը ինչո՞ւ անակնկալի եկաւ, եւ մի քանի օրում թուրք-ադրբեջանցիներին յաջողուեց ճեղքել Ջեբրայէլի մեր պաշտպանական հզօր գիծը: Ինչո՞ւ նախապատրաստւած չէինք իսրայէլաթուրքական ԱԹՍ-ների յարձակման դէմ: Ինչո՞ւ էինք կարծում, որ ռազմական գործողութիւնները, ինչպէս նախորդիւ, տեւելու են ընդամէնը մի քանի օր, չգիտէի՞նք, թէ Ալիեւը որքան է ծախսել սպառազինման ու մարզումների համար:



«Ինչու»-ները շատ են նաեւ կործանիչ այդ պատերազմին յաջորդած բռնագրաւումների, ընդհուպ՝ Արցախի, յուսանք՝ ժամանակաւոր, կորըստի պարագայում:

Սպասելով եւ չսպասելով որեւէ արձագանգի, հարկաւոր է այստեղ մտահոգութեամբ արձանագրել մեր Ազգային անվտանգութեան ծառայութեան մասին մեր իսկ հասարակութեան մօտ առկայ տպաւորութիւնը. դա մի կառոյց է, որը ծառայում է անձի, ո՛չ պետութեան: Պրոֆեսիոնալ մի ծառայութիւն՝ որն զբաղւած է բացառապէս քրէական հետապնդումներով, այսպէս ասած՝ բռնցքի-թռնցքիներով:

Ծառայութիւն՝ որը յարիր է միայն ոստիկանական ստորաբաժանումներին: Մինչդեռ «սատանան»,- բառն օգտագործւում է դրական իմաստով,- իրաւունք չունի անգործ մնալու: Այլապէս…:

«Ազգ»

# Միայն թէ ինքներս մեր յոյսի թելերը չկտրենք

ՍԻՒՆԷ ՓԱՐՄԱՆԵԱՆ

Մենք ապրում ենք հաւաքական պատկերացումների անապատում, յաճախ կեանքի փշոտ արահետներով անցնելիս, չենք ցանկանում առերեսւել դաժանութիւնների ամբողջ ծալքերին, քանզի այդ պարագային հնարաւոր է ստիպւած լինենք աւելի ցաւոտ զիջումների գնալ, թէեւ իւրաքանչիւրն էլ այս կեանքում որոնում է փրկութեան սեփական ուղին, բայց իրողութիւններն ու իրերի դասաւորումներն առաւել ցաւագին են երբ մեզանից պահանջւում են դաժան քայլեր:

Միւս կողմից յաճախ ցանկանում եւ նախընտրում ենք հաւատալ առաջնահերթ այն մտքերին, որոնց էմոցիոնալ առումով աւելի կապւած ենք, իսկ անուշադրութեան մատնւած իրողութիւններն էլ ազդարարում են որպէս ճշմարտութեան իրատեսական լինելու առումով: Որոշ պարագաներում էլ մեր նախընտրութիւնների պատճառները ոչ միայն կախւած են լինում մեզնից, այլ, նաեւ, լրիւ տարբեր գործօններից, որոնք իւրաքանչիւրի դէպքում, իւրայատուկ են լինում, որպէս օրինակ, դրանք կապւած են ունեցած փորձառութիւններից, միջավայրից եւ այլ հանգամանքներից:

Քաղաքականութեան մէջ էլ այդպէս է: Միջազգային հանրութեան, քաղաքակիրթ աշխարհի, իշխանականների եւ ներկայացուցչութիւնների կողմից կարելի է զգալ մեր ճակատագրին, ապագային եւ ընտրութիւններին ազդելու ճնշում: Բանակցութիւնների տարբեր ձեւաչափերը, որոնց առաջացման համար պահը բաց չեն թողնում, այդ ջանքերի բացայայտ դրսեւորումների օրինակն է, դրանք յաճախ քողարկւում են, ներկայացւելով զուտ որպէս միջազգային հանրութեան «բարեացակամութեան» դրսեւորում:

Բանն այն է, որ աշխարհի առաջնորդները, ռէալ քաղաքականութեան ջատագովները, առաջնորդւում են նմանատիպ տրամաբանութեամբ, տեսնելով, որ մենք որպէս ժողովուրդ հանդուրժում ենք իրենց ճնշումները, իսկ համերաշխութիւն ու միաբանութիւն չենք դրսեւորում ներազգային իմաստով, մինչդեռ, աշխարհի տարբեր ազգերի զարգացման պատմութիւնը ուսումնասիրելով կարելի է հասկանալ, որ գոյատեւել են հէնց ներազգային եւ համընդհանուր միակամութեան շնորհիւ: Այդ հանգամանքների բացակայութիւնը նոյն աշխարհում, երկիմաստութիւնների, տեղիք է տալիս, բերելով այն եզրակացութեան, որ հպատակեցնել հնարաւոր է միայն յանցագործին, առաւել եւս երբ միշտ կարելի է օրինաչափութեան կարգի յաջորդականութիւնը փոխել եւ ստանալ աւելի «շահեկան» համաձայնութիւն, եւ վերջիվերջոյ միատարրութիւն: Մեղմ ասած պլանը գտնւի, գործն էլ կը կարւի, մանաւորապէս երբ նախապայմանները ապահովւած են: Այսինքն հայութեան նկատմամբ տեղի ունեցող ողբերգութեան խորութիւնը այդ նոյն տրամաբանութեան շարունակութիւնն է:

Ամենաակնյայտը եւ առաւել հրատապը այդ տրամաբանութեան գերութեան մէջ յայտնւած օրինակներն են, որոնց ճակատագիրը այսօր կարծես թէ մոռացութեան մատնման շեմին է:

Այսօր իւրաքանչիւր հայի պէտք է մտահոգի, որ ի՞նչ ճանապարհներով հնարաւոր կը լինի նպաստել քաւութեան նոխազ դարձած, բռնի պատանդւած Արցախի ղեկավարութեան ներկայացուցիչների՝ նախկին նախագահների եւ քաղաքական ու ռազմական գործիչների

(Շար. 6-րդ էջում)

Վարդան Օսկանեան.

# «Ո՞րն է այդ հեռանկարը. դա երբեք ամբողջական չի ձեւակերպւել»

«Յանկացած իշխանութիւն իր գնահատականը ստանում է գրանցած արդիւնքներով: Յանկացած իշխանութիւն, նոյնիսկ ամենաձախողւածը, յոյս ունի գրանցած արդիւնքները բարելաւելու եւ պատմութեան մէջ ինչ-որ ձեռքբերմամբ յիշւելու՝ փորձելով ստուերում թողնել ձախողումները», - գրում է նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանը:

«Շատերին թւում է, թէ 44-օրեայ պատերազմից առաջ Նիկոլ Փաշինեանը գիտէր՝ ինչ է անում եւ կամ գիտէր՝ ինչ պէտք է անի դրանից յետոյ: Մի պահ պատկերացրէք հակառակ վարկածը, որ Փաշինեանը չգիտէր, թէ ինչ է անում, շարունակում է չիմանալ, թէ ինչ պէտք է անել եւ որեւէ լուրջ պայմանաւորւածութիւն որեւէ մէկի հետ չունի:

Այս համատեքստում ստացւում է, որ Փաշինեանի իշխանութեան գալուց յետոյ արդէն հինգ տարի է անցել, իսկ գրանցած արդիւնքը, մեղմ ասած, աղէտալի է երկրի համար: Պարտութիւն պատերազմում, հազարաւոր զոհեր, Արցախի կորուստ, Հայաստանի սահմանի անձեռնմխելիութեան կորուստ եւ հետագայ կորուստների վտանգ:

Տրամաբանօրէն՝ Փաշինեանն իր առաջ խնդիր պէտք է դրած լինի սրան հակադրելու ինչ-որ ձեռքբերում, որն իր մտքում, միգուցէ, Հայաստանի սահմաններից ներս բարեկեցիկ կեանքն է, միգուցէ՝ նոր աշխարհաքաղաքական իրավիճակը եւ իր պատկերացրած այդ իրավիճակում Հայաստանի նպաստաւոր դիրքը: Նա ամէն գնով պէտք է փորձի երկարացնել իր իշխանութիւնն այնքան, որ իր պատկերացրած ծրագիրն իրագործելով, թէկուզ ի հեճուկս մեր բարոյական, պատմական եւ այլ արժէքերի ոտնահարման, առաջարկի այնպիսի «փոխհատուցում», որը մոռացութեան կը մատնի կորուստներն ու ձախողումները:

Եթէ նոյնիսկ ընդունենք, որ կայ նման «փոխհատուցում»,- ինչն ի սկզբանէ դժւար է պատկերացնել,- այդուհանդերձ, եթէ առնւազն նրա մտքում նման տեսլական կայ, խնդիրն այն է, որ դա հնարաւոր չէ իրականացնել, եթէ իրականացնողը չգիտի՝ ինչ է անում:



Ինչպէս արտաքին քաղաքական բոլոր հարցերում Փաշինեանն ի սկզբանէ չի իմացել՝ ինչ է անում, ինչը յանգեցրեց պատերազմի եւ պարտութեան, այսօր եւս՝ այն, ինչ անում է Հայաստանի հետ, նոյն ճանապարհի մի մասն է, քանի որ նա կրկին չգիտի՝ ինչ է անում եւ չի գիտակցում չիմանալու հետեւանքները: Ամէն անգամ սխալւելուց եւ ձախողւելուց յետոյ, սխալն ընդունելու եւ հետեւանքները մեղմելու փոխարէն, Փաշինեանը արդարացնում է սխալը՝ ինչ-որ նոր չակերտաւոր նպատակների հասնելու հեռանկարով:

Ո՞րն է այդ հեռանկարը. դա երբեք ամբողջական չի ձեւակերպւել: Բայց 29,8 հազար քառակուսի կիլոմետրի մասին պարբերական յիշատակումները առիթ են տալիս ենթադրելու, որ նրա պատկերացմամբ՝ այդ սահմաններով Հայաստանը պէտք է պայծառ ապագայ ունենայ: Այն հակադիւանագիտական, կացնային զեղումները, որոնց ականատես ենք լինում արտաքին քաղաքականութեան մէջ, հաւանաբար այդ «նպատակին» հասնելու մասն են: Բանն այն է, որ Հայաստանի ներկայիս սահմաններին սպառնացող վտանգը տրամաբանօրէն գալիս է Ադրբեջանից կամ Թուրքիայից:

Բայց տպաւորութիւն է, որ Փաշինեանի բանակցութեան կողմը երրորդ կողմեր են: Այդ կողմերին են ուղղւած արտաքին քաղաքական նրա ուղերձները, եւ այդ կողմերի հետ, իր համոզմամբ, նա ձեռք է բերել ինչ-որ պայմանաւորւածութիւններ: Ողբերգութիւնն այն է, որ դա միայն իրեն է թւում: Իրականութիւնն այն է, որ որեւէ մէկը նրան որեւէ խոստում չի տուել, բայց նա շարունակում է իր քաղաքականութիւնը կառուցել այդ թւացեալ խոստումների վրայ:

Դիւանագիտութեան մէջ ամենակարեւոր գործիքներից մէկը փոխադարձ առեւտրի (tradeoff) հնարաւորութիւն ստեղծելն է: Այն է՝ կարողանալ ընդլայնել օրակարգը՝ հնարաւորութիւն ստեղծելով փոխադարձ առեւտրի համար: Օրինակ, եթէ Պրագայում անգամ Արցախն Ադրբեջանի մաս ճանաչելուց յետոյ նա կարողանար բանակցային օրակարգ ներմուծել խորհրդային շրջանում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ լինելու անվիճելի հանգամանքը, ապա այսօր մենք կը լինէինք շատ աւելի բարենպաստ բանակցային իրավիճակում: Նա դա չարեց, դարձեալ՝ իր կարծիքով երրորդ կողմերից դրա դիմաց ինչ-որ բան ակնկալելով: Այսօր եւս չդնելով արցախցիների՝ իրենց հայրենիք վերադառնալու, առնւազն նւազագոյն ինքնավարութեան, Բաքւի բանտերում մեր հայրենակիցների ազատ արձակման հարցը, Փաշինեանը շարունակում է իր մտքում եղած երրորդ կողմերին ինչ-որ բան առաջարկել, ինչի դիմաց պէտք է ստանայ այն Հայաստանը, որն իր կարծիքով այդ կորուստների «փոխհատուցումն է»: Նա յոյսը դրել է երրորդ կողմի վրայ՝ որեւէ երաշխիք չստանալով եւ, ըստ էութեան, այդ երրորդ կողմերի հետ նոյնիսկ բանակցային tradeoff չունենալով:

Դիւանագիտութեան գիտակ պէտք չէ լինել հասկանալու, որ եթէ բանակցային սեղանին դնում ես զրօ պահանջ, չես ձեւակերպում որեւէ խնդիր, եւ ակնկալում ես, որ քո լռելեայն զիջումները ինչ-որ մի տեղ պէտք է գնահատւեն, դա կարող է բերել միայն նոր զիջումների, ինչը մեծ հաւանականութեամբ կը բերի շատ աւելի փոքր, թոյլ եւ անկայուն Հայաստանի»:

Yerkir.am




## Էլմիրա Կարապետեան.

# «Հրաձգութիւնը պայքար է ինքդ քեզ հետ»

*Սպորտային կեանքի դժուարութիւնները, բարդութիւններն են, որ բացայայտում են մարզիկների իսկական էութիւնը: Այն, ինչը մեզ համար պարզապէս երազանքի ճանապարհն է, իրականում մարզիկների կամքի բացայայտման ուղին է, որով նրանք ձգտում են մնալ պատմութեան սպորտային էջերում:*

*Հայկական հրաձգութեան մեծ ներուժ ունեցող մարզիկներից մէկը Էլմիրա Կարապետեանն է, ով այս տարի դարձաւ աշխարհի գաւաթի խաղարկութեան յաղթող, Եւրոպայի առաջնութեան բրոնզէ, Եւրոպական խաղերի արծաթէ մեդալակիր: Փարիզի Օլիմպիական խաղերի Հայաստանի օլիմպիական թիմի առաջին անդամը մեդալի հիմնական յաւակնորդներից է 33-րդ խաղերում:*

*«Արմէնպրես»-ի հետ զրոյցում Կարապետեանը պատմեց նախորդ բացառիկ նուաճումների, յաջողութեան իր բանաձեւի եւ մինչեւ Փարիզ սպասող իրադարձութիւնների մասին:*

*-Վերջին շրջանում Դուք այն բացառիկ մարզիկներից էք, ով շարունակաբար կայուն արդիւնք է ցոյց տալիս: Արդեօք եղել է մէկ բեկումնային պահ, որն, ըստ Ձեզ, յստակեցրեց Ձեզ համար, որ, այո, հրաձգութիւնն է նպատակներն իրագործելու միջոցը:*

*-Ի սկզբանէ, շատերն էին կարծում, որ իմ՝ հրաձգութեամբ զբաղուելը լուրջ չէ, քանի որ ստանդարտներին համապատասխան մարզումներ չեմ անցկացնում: Ունեմ իմ ուրոյն ոճը:*

*-Իսկ ո՞րն է դա:*

*-Ունեմ իմ դիսցիպլինան (Կարգապահութիւն,- ԽՄԲ.), բայց ինքս եմ որոշում, ինչը երբ անել: Դժուար է ինձ մտցնել այդ շրջանակների մէջ եւ ասել՝ մարզւի՛ր այսպէս: Երբ նոր-նոր էի սկսում, ասում էին, որ մարզումների համար ճիշտն այս կամ այն ոճն է, ես հակառակւում էի՝ պնդելով, որ պէտք է փորձեմ բոլոր տարբերակները: Գուցէ, տարօրինակ հնչի, բայց 19 տարեկանից եմ սկսել զբաղուել հրաձգութեամբ:*

*-Տարօրինակ ու հակաօրինաչափ է այս ամէնը: Դիսցիպլինան որոշում էք դուք, մարզւում էք 19 տարեկանից: Այդ դէպքում, ո՞րն է Ձեր յաջողութեան գաղտնիքը:*

*-Կատաստրոֆիկ նպատակասլացութիւնը: Ու ինձ հետաքրքիր է այն, ինչը գնել չես կարող: Կարող եմ այլ մասնագիտութեամբ գումար վաստակել եւ գնել ցանկացած բան, սակայն մեդալը գնել չես կարող: Ինձ գրաւում է այն, որ մարզիկների հետ ներքին պայքարն այլ վայրում չես կարող գտնել: Հրաձգութիւնը պայքար է միայն քո ու քո միջեւ:*

*-Էլմիրա, անցնող տարին իսկապէս բացառիկ էր Ձեզ համար գրանցած յաջողութիւնների առումով: Ինչն է փոխուել այս տարում:*

*-Դեռեւս նախորդ տարի պէտք է այս փոփոխութիւնը լինէր, երբ ընդամէնը մէկ միաւորի պատճառով դուրս չեկայ Եւրոպայի առաջնութեան եզրափակիչ: Ինձ շատ ոգեւորեց Փարիզի Օլիմպիական խաղերի ուղեգիրը, քանի որ աշխարհի առաջնութիւնում գրանցածս արդիւնքը ինձ համար անսպասելի էր: Այնտեղ գրանցած միաւորն ինձ համար անձնական ռեկորդ էր, եւ ամէն ինչ առաւել հեշտ է դառնում, երբ մէկ անգամ այդքան միաւոր ես հաւաքած լինում: Այս տարի բոլոր այն մրցաշարերին, որոնց մասնակցել եմ, մեդալ եմ նուաճել:*

*-Կարելի՞ է ասել, որ փորձը՝ որպէս այդպիսին, Ձեզ ձեւաւորել է որպէս մարզիկ:*

*-Կարծում եմ՝ նախորդ 10 տարիներն են ինձ ձեւաւորել որպէս մարզիկ:*

*-Ինչն է փոխուել նախորդ տարում, որ այդպիսի մեծ արդիւնքներ էք գրանցում:*

*-Երբ յղի էի, բոլորը կարծում էին, որ լաւ արդիւնքները դրա հետ են կապուած: Բայց մեզ մօտ մի քանիսը յղիացան եւ հասկացան, որ յղիութիւնը խանգարող հանգամանք է: Մօտ 4 ամիս դադարի մէջ էի՝ յղիութեան վերջին 2 ամիսները եւ բալիկիս ծնուելուն յաջորդող 2 ամիսները: Մօտ մէկ ամիս էր, որ նորից մարզւում էի, երբ մասնակցեցի Աշխարհի առաջնութեանը: Ճիշտ ժամանակի դադարն առաւել լաւ մարզում է:*

*-Եւ տարւայ լաւագոյն ձեռքբերում մը, գուցէ, աշխարհի գաւաթի խաղարկութիւնում յաղթելն էր: Ինչպէ՞ս էք հիմա վերյիշում այդ բացառիկ նուաճումը:*

*-Ի սկզբանէ ես պարզապէս ցանկանում էի տեսնել Ռիոն (ծիծաղում է. հեղ.): Մարզիչներիս էլ խնդրում էի, որ ինձ ուղարկէին հէնց այդ մրցմանը: Հրաձգութիւնում կայ մի նուրբ պահ, երբ մտնում ես եզրափակիչ, դա բացարձակ այլ զգացողութիւն է: Ամենադժար «կրակ»-ը առաջին տեղի համար պայքարը չէ, այլ 3-րդ եւ 4-րդ տեղի համար մրցապայքարը, երբ մրցում ես մեդալ ունենալու կամ չունենալու համար: Ես էլ մրցում էի ոչ թէ առաջին տեղի համար, այլ պարզապէս մեդալի համար: Հէնց այն պահին, երբ հասկացայ, որ մեդալը կայ, նոր զգացի, որ նաեւ ոսկուն կարող եմ տիրանալ: Ես հաճոյք եմ ստանում կրակածս ամէն մի փամփուշտից:*

*-Կրակելիս խօսո՞ւմ էք ինքներդ Ձեզ հետ:*

*-Այո, անշուշտ: Բայց ինձ առաւել շատ խանգարում է այն, երբ մրցումների ժամանակ լսում եմ հայերէն խօսք:*

*-Եւ գալով ամենակարեւորին՝ Օլիմպիական խաղերին: Սրանք Ձեր երկրորդ Խաղերն են լինելու: Ինչո՞վ պիտի տարբերուեն նախորդից եւ ի՞նչ խնդիր ունէք Ձեր առաջ դրուած:*

*-Եթէ անկեղծ՝ առաջին Խաղերի ժամանակ այն յուզմունք սաւածը չկար: Խաղերից երկու ամիս առաջ միայն ստացայ Օլիմպիական խաղերի քւոտան եւ միայն վերջին պահին «նստեցի օլիմպիական գնացքը»: Հիմա ես շատ աւելի դանդաղ ու աւելի մանրակրկիտ եմ պատրաստւում Օլիմպիական խաղերին:*

*-Ձեր մտքում օլիմպիական մեդալ ունէ՞ք:*

*-Չեմ կարող պատասխանել այդ հարցին (ծիծաղում է. հեղ.):*

*-Ո՞րն է հրաձգութեան գեղեցկութիւնը:*

*-Հանգստութիւնը:*

*-Եւ մինչ Օլիմպիական խաղերը ի՞նչ պլաններ ունէք, ի՞նչ է Ձեզ սպասւում:*

*-Գրեթէ ամէն ամիս մրցումներ ունենք: Տարբեր մրցումներ են՝ «Գրան Պրի»-ներ, գաւաթներ եւ այլ մրցաշարեր:*

**168.am**

# Մխիթարեանը՝ 34 տարեկանից բարձր ամենաթանկարժէք ֆուտբոլիստների տասնեակում



***Հայաստանի ազգային հաւաքականի նախկին աւագ Հենրիխ Մխիթարեանը Transfermarkt-ի վարկածով ընդգրկւել է 34 տարեկաներից բարձր ամենաթանկարժէք խաղացողների տասնեակում՝ 6 մլն. եւրօ տրանսֆերային արժէքով:***

***Այս ցուցանիշով առաջատարը արգենտինացի յարձակւող Լիոնէլ Մեսսին է:***

***Թոփ 10-ն ունի հետեւեալ տեսքը.***

*1. Լիոնէլ Մեսսի («Ինտեր Մայամի», 36 տարեկան) - 35 մլն. եւրօ:*
*2. Ռոբերտ Լեւանդովսկի («Բարսելոնա», 35 տարեկան) - 30 միլիոն եւրօ:*
*3-4. Կարիմ Բենզեմա («Ալ-Իթիհադ», 35 տարեկան) - 15 միլիոն եւրօ:*
*3-4. Կրիշտիանու Ռոնալդու («Ալ-Նասր», 38 տարեկան) - 15 միլիոն եւրօ:*
*5. Թոմաս Միւլեր («Բաւարիա», 34 տարեկան) - 12 միլիոն եւրօ:*
*6. Լուկա Մոդրիչ («Ռէալ Մադրիդ», 38 տարեկան) - 10 մլն. եւրօ:*
*7. Անխէլ Դի Մարիա («Բենֆիկա», 35 տարեկան) - 8 մլն. եւրօ:*
*8. Մարկօ Ռոյս («Բորուսիա Դորտմունդ», 34 տարեկան) - 7,5 մլն. եւրօ:*
*9. Հենրիխ Մխիթարեան («Ինտեր», 34 տարեկան) - 6 մլն. եւրօ:*
*10. Դուշան Տադիչ («Ֆեներբահչէ», 34 տարեկան) - 5,5 մլն. եւրօ:*

## Միայն թէ...

(Շար. 5-րդ էջից)

*ազատ արձակմանը, որոնք առաջինը տուժել են հէնց այդ անհաշտըւողականութեան հետեւանքով եւ որոնք դարձել են ներսի ու դրսի ոսոխների լուռ համաձայնութեան զոհերը: Իրողութիւնը սա է, փոխուած է օրինաչափութեան կարգը եւ նրանք միայն հետեւանքն են մեր անցած ճանապարհի: Ինչքան էլ, որ մարդիկ են, որոնք արժանի են խոնարհման, յանուն ոչ թէ «քաղաքական» լեզուով անմիաբանութեան կամ նոյն ինքը յանցագործութեան այլ, ընդհակառակը, նւիրուածութեան:*

*Այս խնդրի լուծման համար կարեւոր է ընկալել, որ ներազգային հանդուրժողականութեան գոյացման, արտաքին ճնշումներից ազատւելու ելքերի ամբողջական միջավայրը ապահովելու համար մեզ հարկաւոր է ընկալել եւ հասկանալ ողբերգութեան ամբողջական բաղադրիչները, թէկուզ՝ ամենադաժան ծալքերը՝ ճշգրիտ, բարդ, վերափոխող անլեզու աշխատանքով, որովհետեւ մեր իրականութիւնում հաստատուած քաղաքական անմարդաբնակութիւնը գոյութիւն ունեցող յուսալքւածութեան ակնյայտ դրսեւորումն է, իսկ բարոյականութեան ճգնաժամը հասարակութեան խորքերում այնքան է արմատաւորուած, որ դրա յաղթահարման այլընտրանքները դժար են երեւում, սակայն համընդհանուր լռութիւնը կարող է բերել աշխատանքի եւ այն համաձայնութեան, որտեղ կարող ենք արարել միասին:*

*Միայն թէ ինքներս մեր յոյսի թեւերը չկտրենք:*

## ԱՐՑԱԽԸ...

(Շար. 3-րդ էջից)

*նպատակ է հետապնդում հայութեան շրջանում մոռացութեան մատնել Արցախը որպէս հայ ժողովրդի հայրենիքի անբաժանելի մաս:*

*«Քո որեւէ նախնի ուղիղ կապ ունի հէնց այս պետութեան հետ»*

*Իմ նախնիներից շատերը ուղիղ կապ ունեն ոչ միայն Հայաստանի Հանրապետութեան հետ: Իմ նախնիները 700 տարիներ շարունակ պատասխանատւութիւն են կրել հայ ժողովրդի արցախեան ազգահատւածի ճակատագրի եւ Արցախի դարաւոր պետականութեան կերտման գործում թէ՛ աշխարհիկ, եւ թէ՛ հոգեւոր ոլորտներում: Դարեր շարունակ Հասան-Ջալալեանները հանդիսացել են Արցախի անվտանգութեան, տարածքային ամբողջականութեան, ինքնիշխանութեան, պատմական որոշակի ժամանակահատւածում նաեւ անկախութեան (1722-1736 թթ.) եւ արցախահայութեան քրիստոնէական հաւատքի պահպանման երաշխաւորները:*

*Արցախի Հանրապետութեան հռչակումը արդիւնք է Արցախի տարածքում առանց ընդհատման գոյութիւն ունեցած հայկական անկախ ու կիսանկախ յաջորդական պետականութիւնների՝ Վաչագան Բարեպաշտի հիմնած թագաւորութեան (5-րդ դար), Խաչենի իշխանութեան (12-րդ դար), Արցախի մելիքութիւնների (16-րդ դար), Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդի (20-րդ դարի սկիզբ), որպէս խորհրդային պետականութեան ձեւ՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (20-րդ դարի սկզիբ):*

*Պետականութեան իւրաքանչիւր տեսակ, արցախահայութեան քաղաքական գիտակցութեան եւ վարքագծի զարգացմանը զուգընթաց, ենթարկւել է փոխակերպման՝ թագաւորութիւնից հասնելով հանրապետութեան: Այս իմաստով՝ Արցախի Հանրապետութեան հռչակման էւոլիւցիոն զարգացման ետնախորքում որոշակիօրէն պէտք է տեսնել նաեւ Հասան-Ջալալեանների դերակատարութիւնը:*

*Հետեւաբար, այս իմաստով ինձ պարտաւորուած եմ համարում Արցախի Հանրապետութեան դէօկուպացիայի մասին մշտապէս բարձրաձայնելու եւ տեսանելի ապագայում այն իրականութիւն դարձնելուն միտուած քայլեր ձեռնարկելու առումով:*

*Մենք պիտի Արցախը յետ բերենք ամէն գնով: Եթէ դա մեր սերունդը չարեց, ապա Արցախը յետ բերելու իւրաքանչիւր յաջորդ սերնդի հնարաւորութիւնը որոշակիօրէն նւազելու է՝ դառնալով անիրագործելի երազանք:*

**ՍՏԵՓԱՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆ**
**քաղաքագէտ**

## Գիւմրեցի...

(Շար. 4-րդ էջից)

*յայտնիների դիմանկարներից բացի, ստեղծում է նաեւ հայրենի բնապատկերների ու ճարտարապետական կոթողների գունանկարներ, անմահացած զինուորների նկարներ: Անհատական ցուցահանդէսներ ունեցել է ինչպէս Հայաստանում, այնպէս էլ Ռուսաստանում:*

*Մարին երբեք չի դադարում ստեղծագործել, ասում է, երբ որդիները զինուորական ծառայութեան մէջ էին, իրեն հէնց ասեղնանկարչութիւնն է օգնել, բայց ասեղը ձեռքն է առնում, երբ հոգին խաղաղ է՝ պատերազմի օրերին ստեղծագործել չէր ստացւում. թիկունքի համար անհրաժեշտ իրեր էր կարում: Մարին ոչ միայն ինքն է սիրում ասեղով ստեղծագործել, այլ նաեւ սովորեցնել ու հաճոյքով սովորեցնում է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են տիրապետել այս արւեստին:*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



### ՌՈԶԱ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ

ցաւալի մահուան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, դեկտեմբերի 1-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Նեկտար Սեդրակեան (Ղարիբեան)՝ եղբօր կինը:

Սիլւա Սեդրակեան եւ Ջորջ Ոսկրիչեան՝ եղբօր դուստրը եւ իր նշանածը:

Սեւակ եւ Լինդա Սեդրակեաններ՝ եղբօր որդին եւ իր կինը:

Անժէլ Սեդրակեան (Սարխոշեան)՝ եղբօր կինը:

Արա եւ Քաթիա Սեդրակեաններ՝ եղբօր որդին եւ իր կինը՝ զաւակներով:

Անի եւ Նիկոլա Անսիօներ՝ եղբօր դուստրը եւ իր ամուսինը՝ զաւակներով:

Դիանա եւ Հրաչ Ղարախանեաններ՝ խնամիները՝ զաւակներով:

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Խուդաբախշեան ընտանիքը իրենց շատ սիրելի եւ թանկագին՝



**ՆՈՒԱՐԴ ԽՈՒԴԱԲԱԽՇԵԱՆԻ (ԽԱՉԻԿԵԱՆ)**

մահուան երրորդ տարելիցի առթիւ կատարում են հետեւեալ նուիրատուութիւնները.

1-Ս. Գէորգ եկեղեցու շրջափակում ապրող տարեցներին՝ 20.000.000 ռ.

2-«Ալիք օրաթերթին՝ 5.000.000 ռ.

Գումարն ստանալ «Ալիք»-ից:

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Միրօ Բաղումեանը

30.000.000 ռիալ նուիրել է «Ալիք» օրաթերթին:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Փերիոյ Կրթ. Մ. 1928 արգ... 1991- Թեհրան

Բարձր հովանաւորութեամբ՝

Թ. Հ. Թ. բարեխնամ առաջնորդ

ԳԵՐՇ. Տ. ՍԵՊՈՒՀ Ս. ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

**ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ 95-ամեակի**

**եւ**

**ԹԵՀՐԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ 32-ամեակի**

**ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

Ուրբաթ, դեկտեմբերի 8-ին, 2023 թ.(۱۷ آذر), ժամը 19:00-ին,

Հ. Մ. Ա. Կ. -ի «Կոմիտաս» սրահում

**Մուտքը հրաւէրով**

Հրաւէրը ստանալու համար կապւել **09378758403** համարով

**ԹԵՀՐԱՆԻ ՓԵՐԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**


**ԱԼԻՔ**
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir



ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՈՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՈՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ۶


## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց **յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,** բացի **մահազդերից,** որոնք ընդունւում են նաեւ **նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:**

**«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ**

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

**Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16**
**Հեռ.՝88761154**

**«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ**










Էդւարդ Շարմազանով.

## «Թոյլ մի տուէք, որ քաղաքական տրանսգենդերիզմն ուտի ձեր ուղեղները»



Թոյլ մի տուէք, որ քաղաքական տրանսգենդերիզմն ուտի ձեր ուղեղները: Այս մասին գրում է ՀՀԿ խօսնակ Էդւարդ Շարմազանովը:

«Հայաստանի փրկութիւնը ազգային ու պահպանողական արժէքներին դաւանելու մէջ է:

Հերիք է մոդային, թրենդին ու բրենդին տուրք տալ:

Ամէն գնով ձայն մուրալն ու քւէ ստանալը իմը չէ:

Ամէն գնով նպատակին հասնելը կեղտոտում է նոյնիսկ ամենամաքուր թւացող նպատակը:

Ամէն գնով լսարան մեծացնելը էլի իմը չէ:

Ով այլ կերպ է մտածում՝ խնդիր չէ, կոստիւմը հանէք շորտերով եթեր մտէք, բովանդակութեան փոխարէն անճաշակ յիմար մտքերով վերլուծութիւններ լցրէք ու դիտումներ ապահովէք:

Իմ պայքարս արժէքների ու գաղափարների համար է, այլ՝ ոչ թէ անձերի:

Այդ արժէքները՝ ազգային-պահպանողականութիւնը, աւանդական ու հայկական արժէքներն են:

Ես ոչ թէ հնի, այլ յաւիտենականի ջատագովն եմ՝ Աստծոյ, հայրենիքի, ազգի, եկեղեցու, հայոց բանակի ու ընտանիքի:

Հազար տէր ու կուսակցութիւն փոխածներն այսօր թրենդի մէջ են. ի՞նչ էք առաջարկում, մենք էլ գնա՞նք դրանց ճանապարհով մի երկու քւէ աւել հաւաքելու ու մի քանի լայք աւել ունենալու համար:

Չէ, դա մերը չէ:

Սպարապետ Վազգէնն ասում էր.

«Եթէ նոյնիսկ ամբողջ աշխարհը դառնայ աղանդաւորների ու հոմոսեքսուալների պաշտպան, ես նրանց պաշտպանը լինել չեմ կարող»:

Ներոնն էլ, Հիտլերն էլ շատ հետեւորդներ ունէին…յետոյ ի՞նչ:

Ճշմարտութիւնը քանակի մէջ չէ, որակի մէջ է:

Որակն է քանակ ապահովում:

Իսկ քանի դեռ կարծում էք, թէ քանակն է որակ բերում՝ կը մնաք քաղաքական տրանսգենդերիզմի քարոզչութեան երջանիկ զոհեր»:

**Yerkir.am**

### Թուրքիա-Ադրբեջան....

(Շար. 1-ին էջից)

Յիշեցնեմ՝ ընդամէնը մէկ տարի առաջ գրեթէ նոյն բանաձեւով Նիկոլ Փաշինեանը խոստանում էր կարգաւորել Արցախահայերի հարցը:

Վերջին 100 տարւայ մէջ թուրքերը երկու անգամ մեզ՝ հայերիս, մեր սեփական հայրենիքում ենթարկել են ցեղասպանութեան: Ընդորում, եթէ 1915 թւականին չունէինք պետականութիւն, 2020 թւականին ունէինք զոյգ հայկական պետութիւն:

Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից շարունակական ցեղասպանութեան փաստերն աշխարհին ներկայացնելու, նրա հետագայ ագրեսիան կանխելու փոխարէն, թրքահպատակ եռեակը, թշնամիների գործողութիւնները արդարացնելով, նրանց հրաւիրում է Հայաստան:

ՀՀ անվտանգութեան գլխաւոր սպառնալիքը շարունակում են մնալ այդ եռեակը եւ նրանց սպասարկող ուժերը:

Յ. Գ. - Շատ է խօսւում ՀՀ արտաքին քաղաքականութեան վեկտորի փոփոխութեան մասին: Իրականում՝ Նիկոլի միակ ընտրութիւնը Թուրքիան է»:

**24News**


Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
IRAN AIRTOUR AIRLINES
QeshmAir
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸- ۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am



«Արարատ»
Ամէն փեսակ փնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388



ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09121193212


Պաշտպանութեան նախարար.

## «Մենք լիովին վերահսկում ենք տարածաշրջանը»



«ԱԼԻՔ» - Պաշտպանութեան նախարար գեներալ-մայոր Մոհամմադռեզա Աշթիանին յայտարարել է, որ Իրանը լիովին վերահսկում է ամբողջ տարածաշրջանը:

«Ամերիկացիներն այն ամէնը, ինչ տեղի է ունենում այս տարածաշրջանում, կեղծ կերպով կապում են մեզ հետ, այն պատճառով, որ գիտեն՝ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը գերակայութիւն ունի եւ առաջին ուժն է տարածաշրջանում»,- ասել է Աշթիանին:

Նա վստահեցրել է, որ Իրանը միանշանակ աւելի մեծ յաջողութիւնների կը հասնի պաշտպանական արդիւնաբերութեան տարբեր ոլորտներում, ինչպիսիք են արտահանումը, հաղորդակցութիւնը եւ ռազմական հարցերով այլ երկրների հետ փոխգործակցութիւնը, իսկ ԱՄՆ-ի յայտարարութիւնները պարզապէս դատարկ եւ անարժէք խօսքեր են:

## Ղազախստանն ու Թուրքմենստանը պայմանաւորուել են զարգացնել «Չինաստան-Ղազախստան-Թուրքմենստան-Իրան» միջանցքը




«ԱԼԻՔ» - Աշգաբադում կայացել է տրանսպորտի, տարանցման եւ լոգիստիկայի զարգացման ղազախա-թուրքմենական համատեղ աշխատանքային խմբի առաջին հանդիպումը՝ Ղազախստանի Հանրապետութեան տրանսպորտի փոխնախարար Թալգաթ Լաստաեւի եւ Թուրքմենստանի նախարարների կաբինետին առընթեր տրանսպորտի եւ կապի գործակալութիւնը Բատիր Աննաեւի գլխաւոր տնօրէնի տեղակալի համանախագահութեամբ:

Parstoday-ի համաձայն՝ այս մասին յայտնում է Kazinform գործակալութիւնը՝ յղում անելով նախարարութեան մամուլի ծառայութեանը:

Հանդիպման ընթացքում քննարկւել են տրանսպորտի, տարանցման եւ լոգիստիկայի ոլորտում համագործակցութեան հարցեր: Աշխատանքային խումբը դրական է գնահատել երկաթուղային հաղորդակցութեան ոլորտում ճկուն մրցակցային սակագնային քաղաքականութեան ձեւաւորման ուղղութեամբ իրականացւող համատեղ աշխատանքները եւ պայմանաւորւել է հետագայում շարունակել աշխատանքը այս ուղղութեամբ:

Հանդիպման ընթացքում պայմանաւորւածութիւն է ձեռք բերւել նաեւ Չինաստան-Ղազախստան-Թուրքմենստան-Իրան միջանցքի համատեղ զարգացման շուրջ:


SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه سِت



املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴
تلفن: ۸۸۸۴۵۵۷۷- ۸۸۸۴۵۵۶۶
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی


### Իրանը....

(Շար. 1-ին էջից)

Ալի Հէյդարի Անարին երէկ՝ նոյեմբերի 29-ին անդրադառնալով Արաքս գետի ռադիոակտիւ նիւթերով աղտոտւածութեան մասին շշուկներին, ընդգծել է, որ Ատոմական էներգիայի կազմակերպութեան եւ առողջապահական կառոյցների կողմից իրականացւած հետազօտութիւնների եւ փորձարկումների համաձայն՝ Արաքս գետում ռադիոակտիւ նիւթերի առկայութիւնը չի հաստատւել:Մեծամօրի ատոմակայանի եւ Արաքս գետի միջեւ հեռաւորութիւնը մեծ է, ուստի այս տարածութեան վրայ գետի ինքնամաքրման ուժն նպաստում է ջրի մաքրմանը:

Parstoday-ի հաւաստմամբ՝ Հէյդարի Անարին, Արդաբիլի տարածաշրջանային ջրամատակարարման ընկերութեան գլխաւոր ռազմավարութիւնն է համարել անխափան ու յաջող ջրամատակարարում եւ ասել. «Նահանգի հիւսիսային քաղաքներում խմելու ջուրը ներկայումս ապահովւում է Արաքս գետից, եւ այդ քաղաքներում կայունութեան գործօնը մեծացնելու նպատակով կարգադրւել է «Էմարաթ» ամբարտակից այս քաղաքներին ջուր յատկացնել եւ շուտով մեկնարկելու են գործադրրման աշխատանքները:

### «Հայաստանը....

(Շար. 1-ին էջից)

աւելի շատ իմանալ Իրանի մասին: Նոյնը կարելի է ասել նաեւ Հայաստան իրանցի գործիչների այցերի մասին»,- աւելացրել է նա:

Մոհամմադ Ասադի Մովահեդը կոչ է արել ակտիւացնել փոխայցելութիւնները եւ կարեւոր է համարել ուսանողների եւ մասնագէտների փոխանակման եւ փոխադարձ այցելութիւնների ծրագրերի ընդլայնումը:

«Ես Հայաստանում եմ ընդամէնը 40 օր, բայց արդէն տպաւորութիւնս այնպիսին է, որ գտնւում եմ Իրանում: Հայաստանը եւ Իրանը մշակութային շատ նմանութիւններ ունեն: Ես համոզւած եմ, որ հայերը եւս Իրանում ինչպէս իրենց երկրում են զգում»,- նշել է նա:

**Ankakh.com**


ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է՝
www.alikonline.ir